

սից պիտի հրատարակուէր Փարիզում պ. Արշակ Չոբանեանի խմբագրութեամբ:

Պ. Արշակ Չոբանեանը ծանօթ է ազգային բանասիրութեան մէջ իւր ընտիր երկերով, որոնցից Պ. Դուրեանի կենսագրութիւնը տպագրուած է Տփլիս մեր հրատարակչական ընկերութեան ձեռքով:

Ենորհաւորելով պ. Չոբանեանին իւր նոր ձեռնարկութիւնը՝ «Լուծար»-ի խմբագրութիւնը մաղթում է «Անահտին» երկայն կեանք և յաջողութիւն:

— Հաստատ աղբիւրից կարող ենք հաղորդել մեր ընթերցողներին, որ յարգելի գիտնական պ. Նորայր Բիւզանդացին, որի «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք» անունով ընդարձակ երկը մամուլի տակ է Տփլիսում և ոչ շատ ուշ լոյս պիտի տեսնէ, ձեռնարկում է պատրաստել տպագրութեան համար Կիրակոս Գանձակեցու պատմագրութիւնը:

Մի ալ աղբիւրից գիտենք, որ Կիրակոս Գանձակեցին հրատարակութեան համար պատրաստում է նաև ս. Էջմիածնի միաբան բարեշ. Տ. Սահակ վարդ. Տէր Միքայէլեանը:

— Իզմիրեանց կտակի յանձնաժողովը որոշել է իւր ծախքով տպագրել «Գիրք թղթոց» կոչուած կարևոր աշխատութիւնը, որի ձեռագիրը, որքան մեզ յայտնի է, գտնուած է Կ. Պոլսի Անտօնեան միաբանութեան մատենադարանում և արտագրուելով ուղարկուելու է Տրփլիս մամուլին յանձնելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՆԸ ԲԵՐԼԻՆՈՒՄ

Բերլինի փողոցներից մէկում բարձրանում է մի մեծ սիրուն տուն: Ամեն առաւօտ, ժամը 9-ի մօտերին, այդ տան առաջ ժողովուրդ է երեսանների մի ստուար բազմութիւն:

Այդտեղ կարելի է տեսնել 3 տարեկանից սկսած մինչև դպրոց մտնելու հասակի տղաներ և աղջիկներ (Գերմանիայում ուսուցումը պարտադիր է և իւրաքանչիւր երեխայ 7 տարեկան հասակից պարտաւոր է յաճախել դպրոց)։— Այս ուրախ և զուարթ բազմութեան մէջ լսուում է խօսակցութեան և ծիծաղի ձայներ.— բանի գնում է՝ այնքան աղմուկը բարձր է հնչում— թէ փոքրերը և թէ մեծերը անհամբերութեամբ նայում են լայն դարպասին, որ պիտի իսկոյն բացուի նրանց առաջ։

Ժամը 9 է։ Դրան երկաթապատ վանդակի ետևից երևում է մի նորատի օրիորդ։ Նա ուրախ ժպտով գլուխ է տալիս, բայց է անուամբ դուռը և երեխաների բազմութիւնը ներս է խուժում իւր սիրած տունը։ Լսուում է սենեակներում և նախասենեակներում վագոզ երեխաների ոտքերի ձայները, ներքև, պարտիզում ուղիների և մարգերի մէջ արդէն փուռեցան բազմաթիւ թռուի ու շէկ գլուխներ։ Ցունը և պարտէզը թնդում է ծիծաղի և խօսակցութեան ձայներով։ Փողոցի անցորդները հետաքրքրութեամբ նայում են մեծ մեծ պատուհաններից դէպի ներս, որտեղից ձայներ է լսուում։ Պատուհանների ճակատին կարելի է կարդալ. «Ապաստանարան ի յիշատակ Պետտալոցցու և Փրօքէլի»։

Մանուկների երկու բարեկամ՝ Պետտալոցցու և Փրօքէլի յիշատակին հիմնուած է Բերլինում երեխաների այս ապաստանարանը։ Բազմաթիւ չքաւոր մայրեր, իրանք ամբողջ օրով գնալով աշխատանքի, գոհ են, որ կարող են իրենց երեխաներին ուղարկել «Պետտալոցցու տունը»։ Նոքա հանգիստ սրտով զբաղւում են իրենց աշխատանքով, որովհետև համոզուած են որ ո՛չ մի դժբաղդութիւն չի կարող պատահել իրենց զաւակներին այն ապաստանարանում, ուր բազմաթիւ բարեսիրտ վարժուհիներ պարապում են երեխաների հետ և սիրով խնամում նոցա։ Յաճախ ունենոր ծնողներ ևս ուղարկում են իրենց որդոց Պետտալոցցու տունը։ Այդտեղ են ուղարկում իրենց երեխային յաճախ նաև այնպիսի ծնողներ, որոնք մի որդի ունին, որովհետև երեխան տանը միայնութիւնից տխրում է, իսկ այնտեղ ընդհակառակն ուրախ է անցկացնում, խաղալով և վազվզելով հասակակիցների շրջանում։

Յեսնենք թէ ի՞նչ են անում այդքան մեծ ու փոքր երեխաները Պետաւլոցցու սիրուն տանը: Մտնենք ամենուրեք թէ սենեակները, թէ խոհանոցը և թէ լողարանը, որտեղից լսւում է ծիծաղի և աղմուկի ձայներ, թէ պարտեզը և թէ բանջարանոց: Այստեղ ամեն մէկը մի բանով զբաղուած է և չէք գտնիլ ոչ անգործ ձեռքեր . ո՛չ տխուր դէմքեր:

Հէնց որ դռները բացուեցան և մանուկները ներս խուժեցին, իսկոյն ջահել օրիորդները, վարժուհիք բաժանում են իրանց մէջ սաներին: Իւրաքանչիւր «մօրաքոյր» ժողովում է իւր շուրջը մօտ 15 երեխայ և նրանց հետ միասին գործի է կանգնում: Ամենից առաջ պէտք է ստուգել, արդեօք բոլոր երեխաները կարգին են եկել—չկա՞ն մէջները այնպիսիք, որ մոռացած լինեն լուացուել, մազերը սանդրել կամ զգեստները մաքրել: Եթէ կան այնպիսիք, որ շտապելուց մոռացել են տանը սապոնի գոյութիւնը,—տանում են իսկոյն լողարան, ուր պատրաստ կայ և տաք և սառը ջուր: Աղքատ ծնողների որդիք, որ սովոր են տանը աղտոտ ձեռքերով և երեսով մնալ—որովհետեւ չի եղել մէկը որ նոցա վրայ ուշադրութիւն դարձնէր, սկզբում զարմանում են այսօրինակ կարգերից, լալիս են, չեն կամենում լողարան մտնել, սակայն յետոյ սովորելով մաքրութեան, աշխատում են տանն ևս մաքուր պահել իրենց ձեռքերը և երեսները: Յետոյ սկսւում է ուսման գործը: Եթէ լաւ եղանակ է, գլխաւոր գործը կատարւում է բացօդեայ, պարտեզում կամ բանջարանոցում: Այնտեղ գետինը բահում են, մարգեր են շինում, քաղհան են անում բանջարեղէնը. կանաչեղէնից մի բանի բան պոկում են տանում խոհանոց—ճաշուայ պէտքերի համար, պարտիզում քաղհան են անում ծաղիկները և ջրում են նրանց փոքրիկ ցնցուղներով: Այս գործով պարագում են առաւել մեծ երեխաները: Փոքրերը խաղում են աւաղի կոյտի մօտ:

Ներսն ևս եռում է գործունեայ կեանքը: Մեծ սենեակում, դաշնամուրի մօտ ժողոված են երեխաներ ձեռքերին զանազան նուագարաններ բռնած: Մէկի ձեռքին դարայ է, միւսինը թմբուկ և չնա՝ երեխաներն հետեւում են ուսուցչուհուն, որ փայտը ձեռքին չափ է ցոյց տալիս, իսկ միւսը նստած դաշնամուրի առաջ՝ նուագում է: Նուագածու-

Թիւնը վերջացնելուց յետոյ սկսւում է խմբական երգեցողութիւնը:

Այդ իսկ ժամանակ խոհանոցումն ևս կարգին աշխատում են, մաքրում են գետնախնձորը և զանազան կանաչեղէններ, հարկաւոր է ջուր բերել ջրհորից, որ բանջարանոցի մօտ է, պէտք է լապտերները մաքրել, ամանները և գդալները լուանալ, սենեակներից մէկում ևս մեծ հետաքրքրութեամբ աշխատում են աւելի հասակաւոր երեխաներ: Նրանց առաջ դրուած է ամանով սոսիճ, զանազան գործիքներ, մուրճ, հատիչ, ունելիքով աման, մետաքսեայ կարկատում, ներկում են հնացած խաղալիքները, որ փոքրերը կոտորել են: Պատահում է, որ երեխաները կարկատում են կոտորած սեղաններ և աթոռներ, և կրկնում են պատռած պատռաները:

Այդ ժամանակ դասարաններում ուսանում են աւելի հասակաւոր երեխաներ: Այդ ուսման ևս յաջորդում է խաղը: Երբ երեխաները հասակն առնում են, նորա թողնում են Պեստալացցու տունը և կարգալ, գրել ու հասարակ խնդիրներ վճռել իմանալով, մտնում են արդէն իսկական դպրոց:

Կէսօրին մանուկները ճաշում են: Ճաշից յետոյ փոքրիկները գնում են քնելու: Յատակի վրայ փռում են լայն ներքնակներ և երեխաները կողքկողքի պարկում են ծածկուելով մի ընդհանուր մեծ վերմակով:

Առաջին անգամ Պեստալացցու տուն մտնողը այն տպաւորութիւնն է ստանում, որ այդտեղ ոչ մի կարգ չկայ: Բայց բաւական է մի քանի անգամ լինել այնտեղ, որ մարդ համոզուի թէ մանուկների զբաղմունքները խիստ հետեւողութեամբ և որոշ նախագծով է կատարւում: Այստեղ միայն բացակայում է աշխատանքի բաժանումը որոշ ժամերի, ինչպէս լինում է այդ իսկական դպրոցներում: Եթէ ուսուցչուհին նկատում է, որ երեխաները կարգալուց ձանձրացան, իսկոյն սկսւում է խաղը. եթէ մանուկները վազվզելուց յոգնեցան — իսկոյն նստացնում են նրանց սեղանների առաջ և գործ են տալիս, որ նա յարդից կամ թղթից մի բան հիւսի: Իւրաքանչիւր խաղ, իւրաքանչիւր զբաղմունք նպատակ ունի մի որ և է բան ուսուցանելու երեխանց, և

որ գլխավորն է երեխան ընտելանում է առանց դժգոհութեան, կռուի կամ արտասուքի զիջանել իւր ընկերին: Մանուկները շատ են սիրում իրենց բարի դաստիարակչուհիներին, իւրաքանչիւր «մօրքուրիկ» (այսպէս են նոքա սովորանուանել ուսուցչուհիներին) միշտ շրջապատուած է փոքրիկների ահագին բազմութեամբ: Երբեմն, ճաշերից յետոյ, «մօրքուրիկը» առնում է իրան հետ մի երկու աղջիկ կամ տղայ և նրանց հետ գնալով պարտէզ, նստում է ծառի հովանու տակ և կարդում նոցա որ և է հեքեթ, որ մեծ զուարճութիւն է պատճառում երեխայոց:

Զմեռը երեխայք ձնագնտի են խաղում. աւելի մեծ աղջիկները կարկատան են անում, իսկ տղաները հիւսնութեամբ են պարապում. փոքրիկները կողովներ և գորգեր են հիւսում:

Որպէս զի երեխաները կարողանան աւելի պարզ գաղափար կազմել իրերի վրայ, իւրաքանչիւր ամիս վերցնում են մի որ և է իր և զննում են բազմակողմանի կերպով: Դեկտեմբերին օրինակ այդ առարկան է տօնածառը: Այս դէպքում ամենափոքրիկ երեխան անգամ իւր բաժինն ունի: Բերում են եղէնու բազմութիւ մանրիկ հոտաւետ ձիւղեր: Բերում են աւազ, ձիւղերը տնկում են աւազի մէջ և ըստացւում է եղէնու փոքրիկ անտառ: Երեխաները իրենց խաղալիկները դարսում են եղէնիների մէջ՝ նապաստակներ, գայլեր, արջեր, ձիւղերին կպցնում են սկիւռներ, երբ որ այդպիսով անտառին կենդանութիւն է տրւում, երեխաները սկսում են երգել ժողովրդական երգեր, որոնց մէջ երգւում է անտառը իւր գազաններով: Հետեւեալ օրը եղէնին արդէն պտուղներ է բռնում և նրանցից շինում են զանազան խաղալիքներ: Մեծերին պատմում են թէ որտեղ երուամի է աճում եղէնին և մարդուն ի՞նչ օգուտներ է տալիս: Ամբողջ խմբով ծանապարհ են ընկնում նոքա դէպի բուսաբանական պարտէզ և այնտեղ զուարճանում են ահագին մեծութիւն ունեցող բազմաձիւղ եղէնիները դիտելով: Յետոյ տուած օրինակի վրայ նկարում են եղէնին և նրա ձիւղը և ապա նկարը զարդարում գունաւոր մատիւներով: Դաստիարակչուհին բերում է կակուղ կաւ և երեխաները նրանից շինում են եղէնու պտուղը: — Ապա եղև-

նու իսկական պտուղները ոսկեջրում են, որ յետոյ ծնունդեան տօներին պատրաստուած և այլ բազմաթիւ իրերի՝ թմբուկների, տունկերի, աստղերի և այլն շարքում, որի վերայ ամբողջ աշուն աշխատել են—կգարդարեն իրենց հանդիսաւոր տօնածառը:

Այսօրինակ զբաղմունքների մէջ արագութեամբ անցնում է օրը. ժամի չորսը խփում է և երեխաները պատրաստուած են տուն գնալու: Բայց որքան ցաւալի է թողնել Պետալոցցու տունը: Երեխաների մեծագոյն մասը ուրախութեամբ կմնա, այդտեղ մինչև ուշ գիշեր: Երեխաներն այն աստիճան ընտելանում են իրենց վարժուհիներին և ընկերներին, որ նրանց չեն մոռանում նաև դպրոց մանելուց յետոյ: Յաճախ նոքա կրկին գալիս են Պետալոցցու տունը, փաթաթուած են իրենց նախկին ուսուցչուհիներին, ներս են վազում խոհանոց, անց ու դարձ են անում պարտիզում, որ այնքան ուրախ ժամեր են անցկացրել նոքա, ուր իրենք ևս աշխատել են ծաղկանոցը շինելու ժամանակ: Երջանիկ յիշողութիւններ:

Թարգմ. Ա. Մ.

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՆԵՐ

Մեզ ուղարկուած է երկու հալ մատենադարանների կանոնադրութիւններ. դոցանից մէկը հիմնուած է Աղէքսանդրիա տարւոյս մարտի 8/20-ին «Հայկական մատենադարան» անունով և նպատակ ունի «կազմել « ըստ կարելոյն ամբողջ հաւաքածոյ մը ամեն լեզուով « հրատարակուած գիրքերու, հանդէսներու և թերթերու, որ Հայոց ազգին և երկրին վերաբերեալ նիւթերու վրայ կը խօսի». այս մատենադարանը ազգային «անձեռնմխելի սեփականութիւնն» է և նորա հիմնարկութեան «անփոփոխելի սկզբունքն ընթերցասիրական և ուսումնասիրական է լոկ»: